

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄԻ

«ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ»

ՃԱՌԻՆ ԼՐԱՑՈՒՅԻՉ ԱՆՏԻՊ ՄԱՍԸ

Ս. Եփրեմի «Յայլակերպութիւն Տեան» շառը, որ ասորի Ս. Հօր ամենէն գէղեցիկներէն մին է, և այնքան նշանակալից-մանաւանդ իր անտիպ մասին մէջ զոր ներկայիս կը հրատարակենք - Գրիստոսի մի անձին և երկու բնութեանց յստակ և բացայայտ վարդապետութեամբ, որ կարծես յատկապէս գրուած ըլլայ հերքելու այն երկու անհիմն մտորութիւնները, նետորի ու Եւալիքեոսի, որոնք յիշեալ Ս. Հօր մահուընէն (+ 373) գրեթէ կէս դար ու աւելի վերջը երևան էլան՝ բոլոր քրիստոնէայ արեւելքը վեր ի վայր ընելու։ Այս շառը՝ շատ կէտերով մեծ նմանութիւն ունի Սրբոյն Լեւոնի վարդապետական Թղթոյն հետ, — մեր մէջ ընդհանրապէս ճշմարիտ Լեւոնի՝ անուամբ շանչցուած, — և այս երկուքին իրարու հետ ունեցած կուպը կամ աղբիւրը այնքան սերտ է, որ մարդ կը փորձուի վայրկեան մը մտածել՝ թէ երկրորդը ներշնչուած ըլլայ առաջինէն։ Շատ աւելի նմանութիւն ունի շառս՝ Շնորհաւայ առ Կիւ Սանուէլ գրած Ա. Թղթոյն հետ, որ անտարակոյս ոգաւուած է ասիկ, ամբողջ նախադասութիւններ բառ առ բառ ազդեցանելով անոր մէջ։

Յիշեալ շառին առաջին մասը, — ուր ասորի Ս. Հայրը՝ Գրիստոսի այլակերպութեան խորհրդոյն հողիւնհրաջ զմայլանքէն տարուած՝ իր յատուկ բանաստեղծական խանդն ու Թախը գրած է, մինչ երկրորդ մասը՝ զուտ վարդապետական է, — լոյս տեսած է նոյն Ս. Հօր մատենագրութեանց մէջ, թիւ շառընտրին վրայէն, որու մասին հրատարակիչք կ'ըսեն յա-

ռաջաբանին մէջ, «երկամագիւր անթուական մատեն, ցանկալի հնութեամբ և հարազատութեամբն»։ Ներկայապէս ունինք ուրիշ հինգ շառընտիրներ, որոնց մէջ կը գտնուի յիշեալ շառը, որ են, Ի. Ի. Ի. Ի. Ի. Ի. Ի. Սոյն շառընտիրներուն նկարագիրը ընդարձակօրէն ըրած ըլլալով արդէն մեր Հ. Բ. Սարգիսեանը, իր «Մայր ցուցակ հայ. ձեռագրաց» գործին Բ հատորին մէջ, հոս հարկ կը համարիմ միայն գիտել տալ հետեւեալ կէտը։ Այդ վեց շառընտիրներէն միայն երեքը (Ի. Ի. Ի. Ի.) ունին ամբողջապէս Այլակերպութեան շառը, որոնցմէ լուսագոյնն է Ի. Ի. Ի., որ՝ ի բաց աւելալ ինչ ինչ անշնչան յապաւումներէ և յաւելումներէ՝ միակն է, որ յոյն բնագրին աւելի հաւատարմով է. մինչդեռ միւս երկուքը (Ի. Ի. և Ի. Ի.) ունին ամբողջութեամբ շատ աւելի յապաւումներ և մերթ անո՞ւ և անձա՞ յաւելումներ ունին։ Իսկ Ժ. Ի. և Ի. Ի. շառընտիրք Թերի են, յիշեալ շառին առաջին մասը միայն ունենալով և կը պահի վերջին մասը՝ իբր 3-4 էջ։ Ասոնց հակառակ, Ի. Ի. շառընտիրը, — որ իրաւացի պատկանելի է իր գիրքով, մեծութեամբ և գրչութեամբ, և մանաւանդ պատկանելի՝ իր սաացողին (Սմբատ Թաղաւորին) և անոր հօրեղբոր (Ջաքարիւս կամողիկոսին) անուններով, — լուռի առաջին մասը՝ իբր 3 էջ, և կը սկսի «տեսանել զմարդկութիւն նորա, զոր ոչ էին տեսաւ» բառերով (յէջ 65 սուպերին)։ Սա ալ սակայն, թէ և շատ աւելի ընտիր քան Ի. Ի. և Ի. Ի. շառընտիրները, շառին վերջին մասին մէջ անոնց պէս շատ տեղ յապաւած ու համառ-

1. Սիքեմագիւր Տումարի Ս. Լեւոնի եւ Սամեանց Ս. Ժողովոյն Քաղկեդոնի. Վենետիկ. 1806։

2. Ս. Եփրեմի Մատենագրութիւնը. հտ. Դ. էջ 63-68. Վենետիկ. 1896։

3. Անգ. հտ. Ա. յատ. էջ 11։

4. Այլակերպութեան շառին վերջը գրուած է հետեւեալ

նշխառնադրանք. «Որ ոգորմի սաացողի սուրբ զրոյս Սմբատ Թաղաւորին և ճաւաղաց նորին Ամիրա Քաղկեդնիէն և Գունիա խաթունին և հօրեղբարն Տէր Ջաքարիայ կամողիկոսին, և քուերն խանուս խաթունին» են. (ձաւորաւ. Ի. Ի. էջ 129)։

տած է, մանաւանդ վարդապետական կոորնէրը: Այս վեց ճառընտիրներէն հինգը կարծես մի և նոյն նախնական ձեռագրէ մ'օրինակուած են, բոլորն ալ գրեթէ նոյն յաւելումները և զեղ-լումներն ունենալով, և բոլորին մէջ ալ զբա-նուակով այն անտաղի յաւելուածը. « ո՞վ Պետրէ, ոչ եղբոր ունկնդիր մարգարէիցն » ևն, որ կը գտնուի հրատարակուած ճառին ստորոտը: Միակ բացառութիւնը որ կը կազմէ՝ ի՞ր ճառ-ընտիրն է, որ չունի յիշեալ յաւելուածը, բոլորովին անկախ միւսներէն և հաւանօրէն անոնցմէ աւելի հնազոյն:

• •

Առաջին իսկ հարեանցի համեմատութիւն մը բաւական կ'ըլլայ հետեցնելու, թէ Ս. Եփրեմի Ալլաիկերպութեան ճառը Թարգմանուած չէ Ասորերէնէ, — գոթաբառաբար ճառիս ստորի բնագիրը ձեռքերնիս հասած չէ, — քանի որ ասորերէնի ոչ մէկ նշան կամ հետք ունի, ինչ որ ընդհակառակն կ'ընէի նոյն Ս. Հօր Աստուածաշունչի մեկնութեանց հայ Թարգմանու-թեան մէջ: Ընդհանրապէս Ս. Եփրեմին գոր-ծերը, և յատկապէս իր ճառերը, արդէն իսկ անոր կենդանութեան ժամանակէն յունարէն Թարգմանուած էին և եկեղեցեաց մէջ կը կար-գացուէին յետ Ս. Գրքին, ինչպէս կը վկայեն Հերոնիմոս, Գր. Նիւսացին և Սողոմոնոս: Լայ Թարգմանիչը, անշուշտ անտեղեակ ասորերէնի, յունարէնէ Թարգմանած է սոյն ճառը, որուն աներև ապացոյցներ են, 1^o. Հայերէնի մէջ բառերն անգամ Խիչգ յունարէնի բառերուն կարգը ունին, մերթ նոյն իսկ իմաստին միտու-թեան ու շփոթութեան տեղի տալով: 2^o. Թարգ-մանիչը, մերթ չլիջելով յոյն բառին համա-պատասխանող բնիկ հայերէնը, անոր նիւթա-կան Թարգմանութիւնը կ'ընէ. օր. οὐκ ὄντων, որուն համապատասխան Չքիգր բառն է զըն-դօնիս, ինքը կը Թարգմանէ զի տանէ (ի տան) ծնեալ³: 3^o. ինչ ինչ սխալ հասկացողութիւն, ներ ու անյարող Թարգմանութիւններ՝ բառերու և նոյն իսկ նախադասութեանց՝ ուրիշ կերպով չեն կրնար բացատրուիլ, բայց միայն յոյն բա-ռերուն սխալ ընթերցմամբ. օր. εὐτελεσ (լոկ, սոսկ, պարզ) կարգացած է ἐντελεσ և Թարգմա-նած «կատարեալ»։ Եν ὄντων (անուամբ) կար-

գացած է ἐν ὄντων և Թարգմանած «ի մար-մնի»։ οὐκ ὄντων (ուռկան) Թարգմանած է «արկղ», գուցէ θήκηον կարգաւով. ἐκ δὲ οὐδὲ (նշէր) Թարգմանած է «նստիք», Թերևս ἐκ δὲ οὐδὲ կար-գաւով, ևն, ինչպէս նշանակած և ուղղած եմ ծանօթութեանց մէջ: Սակայն սակէ չենք կրնար հետեցնել թէ Թարգմանիչը այնքան մոտ չ'ըլ-լայ յունարէնին, որովհետեւ այդպիսի վրի-պակներ և անճշգրտութիւններ կը գտնուին ոչ միայն մեր բոլոր դասական Թարգմանութեանց մէջ, այլ նոյն իսկ Ս. Գրքի Թարգմանութեան մէջ, որոնք կամ անուշագրութեան արգիւնք են Թարգմանիչին կամ օրինակողաց, և յաճախ յոյն բառերուն շեշտերուն կամ ձայնաւորներ-րուն զանցառութեան կամ այլալուծեան, մա-նաւանդ ձեռագրաց մէջ, որով ոչ միայն բա-ռերուն իմաստը կը փոխուի, այլ նոյն իսկ հակառակ իմաստներ առաջ կու գան:

Գալով հայերէն լեզուին, եթէ չկարենանք սակզարեան Թարգմանութեանց կարգը դասել զայս, սակայն պէտք է ըսել՝ որ բաւական սա-հուն, պարզ, գեղեցիկ ու ընտիր է, նկատի ունենալով մանաւանդ որ Թարգմանիչը ընտա-ցեր է ընդհանրապէս հետեւիլ, ինչպէս լատինը, բնագրին բառերուն բնական կարգին: Այս և ուրիշ լեզուական գիտողութիւններ բնականա-բար այն համոզումը կու տան, որ եթէ մեր Ե դարուն փայլուն հայկաբաններուն ու Թարգ-մանիչներուն խմբին մէջ չենք կրնար դասառ-րել զինքը, սակայն և ոչ ալ չ'սխտել իրեն գէ՛ծ անոնցմէ մէկուն աշտիկերտած ըլլալուն արժա-նիքը, և գուրս վտարել զինքը Ե դարու շըր-ջանէն, եթէ միայն ինչ ինչ քերականական ար-տուղութիւնք — ենթադրելով որ գրչագրաց ա-ղաւաղմունք չ'ըլլան և մի քանի խորթ բա-ռեր, ինչպէս են, քսիւտորիւի՝ փոխանակ սաս-տեղ ըսելու և վիրաստորիւ՝ փոխանակ հաս-տատուի Թարգմանելու, ևն, վայրկեան մը գե-ղեւէ շտային ինծի՝ գոնէ կէս զար մ'աւելի ետ տանելու զինքը:

Սակայն կարելի չէ չխոստովանիլ, որ Թարգ-մանիչը այնքան հմուտ և զօրաւոր չէ աս-տուածաբանական ուսմանց մէջ, և մանաւանդ վարդապետական կնքնոտ և նուրբ խնդիրնե-րուն, որոնք իր ժամանակները կը յուղուէ-ին տակաւին, ոչ միայն պարզ եկեղեցական ներու և աստուածաբաններու՝ այլ նոյն իսկ

1. Տես Ս. Եփր. Մատեմար. հտ. Գ. էջ 88. 1. ծանօթ.

2. Եփե. Պատմ. Գ. ցւ. ԺԶ:

3. Ս. Եփր. հտ. Գ. էջ 67.

ամենէն աւելի խոր և հմուտ վարդապետներու և Հարց մէջ, և որոնք անգամ յաճախ զերբար չէին հասկնար: Ենթադրելով վարդական մը թէ թարգմանիչը սպարած ըլլայ Ե դարուն վերջերը կամ Զ-ին սկիզբը, երբ Յունաց ու մերիննե-րուն մէջ կը մշուէին տակաւին կրօնական վե-ճերն ու պայքարները՝ Բրիտոսի «մի կամ երկու բնութեանց» խնդրոյն շուրջը, — երբ իս-մաստախրական ու աստուածածախական բա-ւեր ու բանաձևերը՝ զանազան մեկնութեանց ու բացատրութեանց տեղի տալով՝ կը գրգռէին ոգիները և կը բերը, — կարելի էր որ թարգմա-նիչը զերծ մնար այդ միջավայրին ազդեցութե-նէն: Եւ իրօք կը գգայունի այդ ազդեցութիւնը իր գրչին տակ, թէ և իր թարգմանածն ըլլայ ամենէն աւելի ուղղափառ և նրբամիտ Ս. Հոր մէջ ճառը: Անտարակոյտ թարգմանիչը ո՛չ Ա-թէնքի լիկէոնին կամ Աղէքսանդրիոյ շեմա-րանին, և ո՛չ ալ Բիւզանդիոնի կամ Անտիո-քայ Բարձրագոյն վարժարաններուն մէջ ուսած ու հմտացած էր փիլիսոփայական ու աստուա-ծաբանական նրբին խնդիրներուն, անոր համար ալ կը կախաղէ՝ կը կաղայ գրիչը, երբ բնազան-ցական նուրբ ու խրճիին բացատրութեանց կը պատահի. մինչդեռ, ընդհակառակն, երազ ու անայլթօք կը սահի գրիչը՝ երբ նիւթը պարզ է, ճառական կամ պատմական իր ունեցած աստուածաբանական ծանօթութիւնները շատ տկար՝ ծանծաղ ու անորոշ են. յստակ ու պայ-ծառ զաղափարները չունի վարդապետական յա-տուէ բաւերուն ու բանաձևերուն, կը չփութէ մէկը միւսին հետ, և չմոլորելու չափազանց երկիւղէն՝ մերթ յայտնի վրիպակի մէջ կ'իյ-նայ: Զի գիտեք զանազանի իրարմէ օձօտ, փօտ, օրծօտաճէ բառերը, որոնք կը թարգմանէ հա-ւասարապէս հռչիւն կամ քրիստիւն, իսկ քրի-ստոս, որ է՝ անձն, դէմ (դէմք), երես, կը թարգ-մանէ միտ պատկեր՝ անխորթ թէ՛ Քրիստոսի անձին և թէ՛ Երրորդութեան անձանց համար. այսպէս կ'ըսէ. «Պատկերի Հոգւոյն Սրբոյ» փոխանակ անձն ըսելու: Սակայն ամենէն աւելի իրեն մոտեցի կու տայ ծօ կամ ձգօթօրս փո-տօս բացատրութիւնը, ուսկից ըստ կարելւոյն իոյոյ կու տայ, Յովհ. իմաստասիրին ըսածին պէս,

«փառիչի ի բնութեանն անուանէ և յերկուցն ասելոյ՝», ինչպէս կը հաստատէ հեռեկալ օրիւ-նակը: Ս. Եփրեմ կ'ըսէ. ձգօթօրս տօճ փօտօս սոնալծօսած և՛ անծօտօս են միգ օրծօտօս, որ է՝ «զերկուս բնութիւնս ի մի եկեալս և միաւո-րեալս ի միութեմ ենթակայութեան (անձին)». թարգմանիչը կ'ըսէ. «միաւորութեամբ բնու-թեանցն եկաւորեալ ի մի էութիւն», ուր կը զեղչէ երկորը և օրծօտօսը — կը թարգմանի հռչիւն: Այսպէս նաև ուրիշ անգամ օրծօտօս բառը՝ Ս, Երրորդութեան անձանց համար գոր-ծածուած՝ հռչիւն թարգմանելով, բաւական անյաւոյ և նոյն իսկ կոսականի նախադասու-թիւն մը յառաջ կու գայ. «ն քրիստ քրօտօտօս քրօտ օրծօտօս», որ է՝ «յերիս անձինս կամ են-թակայութիւնս», հայը կը թարգմանէ «երկոյ պատկերաց և մի հռչիւնս» Նոյնպէս Ս. Եփրեմի խօսքը Քրիստոսի համար, Յօճ և՛ ձգօթօս և՛ «միաւորութեան» անձանց համար, Յօճ կ'ընէ՛մ հոս մէջ բերիչ ուրիշ նման վրիպակներ, որոնք ուղղած եմ՝ հեռեկալ ճառին ծանօթութեանց մէջ:

Հ. ՅՈՂԱՆՆԻՍ Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Ս. ԵՓՐԵՄԻ

«ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ»

ՀԱՌԻՆ ԱՆՏԻՊ ՄԱՍԸ

Մի դարձեալ բնութիւնն Հաւր և Որդւոյ և սուրբ Հոգւոյ. մի զարութիւն, մի էութեւն, մի արքայութիւն. և մի կոչէր զնա ձայնն, և ի մարմնի կատարէր¹, և ի փառս այլակերպ²: Ին ի Մարիամայ՝ որդի զնա կոչէր, ոչ բաժանեալ մարմին³ իւրոյ մարդեղութեանն⁴ ի փառաց աստուածու-թեանն. մի դարձեալ ի մարմնի երեւեալ յաշխարհս⁵, փառս նորա պատուեաց

1. Յովհ. Իմաստ. հոս ընդդէմ Երևութեանաց. էջ 18. Վեներեմ. 1807:

2. Յոյնը կ'ըսէ. «ն օնօմատ օժտեալ», որ է՝ «լու-կով անուամբ». Թարգմանիչը կարգադրէ և հասանդին. «ն օմօմատ օժտեալ», և Թարգմանիչն է՝ «ի մարմնի կատարէր»:

3. Յոյնը. «փօթթթ», որ է «աւազին»:

4. Ուղղիւն՝ «Մարիամ» ըստ յունին:

5. Ուղղիւն՝ «մարմնով»:

6. Զունի յոյնը «Իւրոյ մարդեղութեանն»:

7. Ըստ յունին, «զի մի Աստուած է՝ մարմնով երեւալն յաշխարհի»:

զգիտաւ աստուածութեանն որ ի Հարէ՛, և ի մարմին նորա պատուեաց զմարդեւորութիւնն զոր ի Մարիամայ՝, միաւորութեամբ բնութեանն եկաւորեալ ի մի էութիւն՝, միածինն ի Հարէ և ի Մարիամայ ծնեալ։ Որ բարձանէ, բարձանեալ լիցի յարքայութենէ նորա. և որ որոշէ՛ զբնութիւնս նորա, լուծեալ լիցի ի կենաց նորա։ Եւ որ ուրանայ եթէ ոչ ծնաւ Աստուած ի Մարիամայ, մի՛ տեսցէ զգիտաւ աստուածութեան նորա. և որ ուրանայ եթէ ոչ զգեցաւ մարմին առանց մեղաց, է եղծեալ ի փրկութենէ նորա՝, Այս գործը քո որ վկայեն՝, և զարութիւն աստուածութեանն ուսուցանէ զանհանձարսն՝, զի է Աստուած ճշմարիտ՝, և և եթէ ոչ ստուգեն տկարքն զմտածութիւն՝, ընկալցին զգառախատան յաւուրն անեղաւերակի։ Եթէ ոչ էր մարմին, Մարիամ ի միջոյ զո՞ք բարձատէ՞։ Եթէ ոչ էր Աստուած, Գարբիելի ո՞վ հրամայէր՝, Եթէ ոչ էր մարմին, ի մտուր ո՞վ եղաւ՝. Եթէ ոչ էր Աստուած, հովիւքն ո՞վ երկրպագեցին։ Եթէ ոչ էր մարմին, Յովսէփ զո՞ք թլփատեաց. Եթէ ոչ էր Աստուած, աստղն ի յերկնից ո՞վ փութայր՝. Եթէ ոչ էր մարմին, Մարիամ զո՞ք դիեցուցանէր. Եթէ ոչ էր Աստուած, ամբոն ընծայ ո՞վ մատուցանէին։ Եթէ չէր մարմին, Սիմէոն ի

զիրկս զո՞ք էր բարձեալ. Եթէ չէր Աստուած, ո՞վ ասէր՝ «արդ արձակեա՛ զիս ի խաղաղութիւն»։ Եթէ չէր մարմին, Յովսէփ յեղիպտոս զո՞ք ատեալ փախչէր. Եթէ չէր Աստուած, «յեղիպտոսն կոչեցից զորդի իմ» առ ո՞վ կատարէր. Եթէ ոչ էր մարմին, Յովհաննէս զո՞ք մկրտեաց և ձեռնադրեաց՝. Եթէ չէր Աստուած, Հայր յերկնից ո՞վ վկայեաց՝ «Դս՛ է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ»։ Եթէ չէր մարմին, ո՞վ պահեաց և քաղցեաւ յանապատին. Եթէ չէր Աստուած, հրեշտակը իջեալ յերկնից զո՞ք պաշտէին։ Եթէ չէր մարմին, ի հարսանիսն ի Կանա Փալիլեացւոցն ո՞վ կոչեցաւ. Եթէ չէր Աստուած, զԼուրն ի գինի ո՞վ փոխարկեաց։ Եթէ չէր մարմին, հացն յորո՞ք ձեռս եղան. Եթէ չէր Աստուած, ամբոնը հինգ հազարը՝ բաց ի կանանց և մանկուոյ՝ յանապատին ո՞վ յազեցոյց ի հինգ նկանակէն և յերկուց ձկանցն։ Եթէ ոչ էր մարմին, ի նաւին ո՞վ նստէր՝. Եթէ ոչ էր Աստուած, հողմոյն և ծովուն ո՞վ բանադրէր՝. Եթէ ոչ էր մարմին, Սիմոն փարիսեցին ընդ ո՞վ ճաշակէր. Եթէ չէր Աստուած, յանցանաց մեղաւորին թողութիւն ո՞վ շնորհեաց։ Եթէ չէր մարմին, ի վերայ ջրհորին վաստակեալ ի ճանապարհին ո՞վ նստէր. Եթէ չէր Աստուած, շաքարացւոյն ջուր կեն-

1. Ըստ յունին. «Փառց նորա յայտնեաց (նշանակեաց) զբնութիւնն (φύσιν) աստուածային՝ որ ի Հօրէ»։

2. Ուղղելի ըստ յունին. «Եւ մարմին նորա նշանակեաց զմարդկայինն (բնութիւն) որ ի Մարիամայ. — Հոս, ինչպէս նախորդ ծանօթութեան մէջ, «Ծմիչսոց» (նշանակեաց, յայտնեաց) բայը՝ կարգացրէ և Բարզմաշէլը «էտիչսոց» (պատուեաց)»։

3. Թոյնը կ'ըսէ. «ἀμφότερα τὰς φύσεις συγγενοῦσας καὶ ἐνωθεῖσας ἐν μιᾷ θεοσταθείᾳ» այսինքն, «զերկուսին բնութիւնս ի մի եկեալս և միաւորեալս ի միոսն անձնաւորութեան»։

4. Թոյնը. «ὁ συγγένους, «որ զփոքէ»։

5. Կը պակսի հոս. «և ի կենաց՝ որ ի ձեռն մարմնոյ պարգեհեաց»։

6. Ուղղելի ըստ յունին. «Եւթին իսկ գործքն վըկային»։

7. Թոյնը կ'ըսէ. «διακριτικοῦς», որ է «զընթարդան, զմտացիւն, զհանձարեղան», մինչ հայը բուրբուղին հաւառալը կ'ըսէ։

8. Կը պակսի հոս ընտրին հետեւեալ նախադասութիւնը. «Եւ շարժարանց նորա ցուցանեն, զի է մարդ ճշմարիտ»։

9. Ուղղելի ըստ յունին. «Եւ եթէ ոչ հաւանեցին տկարամիտքն»։

10. Ուղղելի ըստ յունին. «առ ինչ Մարիամ ի մէջ բերեալ»։

11. Ուղղելի՝ «Գարբիել զո՞վ կոչէր Տէր»։

12. Հոս կը պակսին հետեւեալ նախադասութիւնը. «Եւ եթէ ոչ էր Աստուած, հրեշտակը յերկնից իջեալ զո՞ք փռաբանէին։ Եթէ ոչ էր մարմին, ո՞վ ի խնամարարս պատեցաւ»։

13. Ուղղելի՝ «աստղն յերկնս ի պատիւ ո՞ր փռաբայր»։

14. Թոյնը լուին «և ձեռնադրեաց»։

15. Ուղղելի՝ «նշէր»։

16. Անտղի է հոս «բանադրել»ը, մինչ յայն կ'ըսէ «ἐπιστάς», որ է «սաստեաց»։

դանի ո՞վ տայր և յանդիմանէր թէ «հինգ ալր փոխեալ է քո»։ Եթէ չէր մարմին, զգեստ մարդոյ ո՞վ արկանէր. եթէ չէր Աստուած, զաւրութիւնը և բժշկութիւնը և սքանչելիք ո՞վ կատարէր։ Եթէ ոչ էր մարմին, ի գետին ո՞վ եթուց¹։ Եթէ չէր Աստուած, ի կաւոյն աչա տեսանել ո՞վ հրամայեաց։ Եթէ չէր մարմին, ի գերեզմանն Ղազարու ո՞վ ելաց։ Եթէ չէր Աստուած, զմեռեալ չորեքաւորեայն ո՞վ հնան հրամանաւ։ Եթէ չէր մարմին, ի վերայ յաւանակին ո՞վ նստաւ։ Եթէ չէր Աստուած, ամբոխը փառաւորութեամբ ո՞ւմ ելին ընդ առաջ։ Եթէ չէր մարմին, հրեայքն զո՞վ էին կայեալ։ Եթէ չէր Աստուած, ո՞վ հրամայեաց երկրի և ի վերայ երեսաց իւրեանց ընկէց զնոսաւ։ Եթէ չէր մարմին, զան քո՞վ հարկանէին. և եթէ չէր Աստուած, զունկն հատեալ ի Պետրոսէ ո՞վ բժշկեաց² ի տեղի իւր անդրէն։ Եթէ չէր մարմին, յերեսա թուը ո՞վ ընկալաւ։ Եթէ չէր Աստուած, զճողին սուրբ յերեսա առաքելոցն ո՞վ փչեաց։ Եթէ ոչ էր մարմին, առաջի դատաւորութեանն ո՞վ եկաց³։ և եթէ չէր Աստուած, զկինն Պիղատոսի յառուջի ո՞վ զարհուրեցոյց։ Եթէ չէր մարմին, հանդերձ զո՞ւմ մերկացուցին⁴ զինուորքն. և եթէ չէր Աստուած, արեգակն զիարդ խաւարեցաւ ի վերայ խաչին։ Եթէ չէր մարմին, ի խաչին ո՞վ էր կախեալ. և եթէ չէր Աստուած, զերկիրս հիմամբը ո՞վ շարժեաց։ Եթէ չէր մարմին, բեռնս յորո՞յ ձեռս և ի յոսոս բեռեցան. և եթէ չէր Աստուած, վարագոյր տաճարին զիարդ ցելաւ, և վէմը պատառեցան և գերեզմանք բացան։ Եթէ չէր մարմին, «Աս-

տուած իմ, ընդէր թողեր զիս» ո՞վ կարդաց. և եթէ չէր Աստուած, «Հայր, թող դոցա» ո՞վ ասաց։ Եթէ չէր մարմին, ի խաչին ընդ աւազակին⁵ ո՞վ կախեցաւ. եթէ չէր Աստուած, աւազակին զիարդ ասաց «Այսաւր ընդ իս իցես ի դրախտին»։ Եթէ չէր մարմին, քացախ և լեղի ո՞ւմ մատուցանէին. և եթէ չէր Աստուած, զժոխը զորո՞յ ձայն լուեալ զարհուրեցան զողալով։ Եթէ չէր մարմին, գեղարդն⁶ կող զորո՞յ երաց և ել անտի ջուր և աւրին. և եթէ չէր Աստուած, զզրուս զըժոխոցն ո՞վ փշրեաց և զկապեալսն հնան⁷։ և յոր հրամանէ մեռեալը արգելեալը արտաքս զային։ Եթէ ոչ էր մարմին, ի գերեզմանի ո՞վ եղաւ. և եթէ ոչ էր Աստուած, վիմո՞նք կնքելով ո՞վ յարեաւ⁸։ Եթէ ոչ էր մարմին, առաքեալքն ի ճանապարհին⁹ զո՞վ տեսին. և եթէ չէր Աստուած, զրաւքն փակելովք ո՞վ հմուտ։ Եթէ ոչ էր մարմին, յոր ձեռս զխոցուցն բեռնաց և զգեղարքեանն ի կողմն շաւղափեաց թողմաս. և եթէ չէր Աստուած, ո՞ւմ խոստովանէր «Տէր իմ և Աստուած իմ»։ Եթէ ոչ էր մարմին, առ ծովեզերքն ճիրերացուց ո՞վ եկեր. և եթէ չէր Աստուած, ո՞ւմ հրամանաւ արկոն¹⁰ լցեալ եղև։ Եթէ ոչ էր մարմին, առաքեալքն և հրեշտակը ամբառնալով զո՞վ տեսին յերկինս. և եթէ չէր Աստուած, երկինք ո՞ւմ բացան և զաւրութիւնք ո՞ւմ պազանէին երկիր զողութեամբ, և Հայր ո՞ւմ պատրաստէր¹¹, «Նիստ ընդ աշմէ իմմէ, մինչև եղից զթշնամիսը պատուանդանս ոտից քոց»։ Եթէ ոչ էր Աստուած և մարդ, սուտ էր փրկուութիւնն¹², ապա սուտ էր¹³ և մարգարէիցն

1. Պէտք է հոս աւելցնել ըստ բնագրին. «և կաւ ի քոյն ո՞վ արար»։

2. Պէտք է աւելցնել. «և հոստատեաց»։

3. Ուղղելի ըստ բնագրին, «առաջի Պիղատոսի յառաջին ո՞վ եկաց»։

4. Յաւակի՝ «և բամանեցին»։

5. Ուղղելի՝ «ընդ աւազակն»։

6. Ուղղելի՝ «և զկապանն ո՞վ ելայ»։

7. Եթէ ոչ էր մարմին, ի գերեզմանի ո՞վ հչաւ՝ և

եթէ ոչ էր Աստուած, վիմոնք կնքելով ո՞վ յարեաւ։ Թարգմանչին կամ օրինակչին յաւելումն է, բնագրին մէջ չը կայ։

8. Ուղղելի՝ «ի վերնատան», ըստ յունի, «էն տօն քորոփ»։

9. Ուղղելի. «ուղակն», ըստ յունի, «տ ԾԻՄԵՄՈՅ»։

10. Ուղղելի ըստ յունի. «զժ հրաշքէրէր (ջժ աւեր)»։

11. Ուղղելի ըստ բնագրին. «սուտ է փրկութիւն մեր»։

12. Ուղղելի՝ «եւ»։

ճայնքն՝ Այլ ճշմարտացան մարդարէքն,
 և անսուտ է մարգարէութիւնք նոցա՝. զի
 զոր հրամայեցաւ ի Հոգւոյն Սրբոյ ի ձե-
 ռանէ նոցա զոր խաւսեցան՝, վասն որոյ
 զոր խաւսեցաւ Յովհաննէս կոյս, որ ան-
 կաւ զլանջաւք բոցոյն, վերաստուգեաց
 զմարգարէիցն զճայն յաստուածաբան ա-
 սեփարանսն՝, ուսոյց մեզ ասելով. « Ի
 սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աս-
 տուած, և Աստուած էր Բանն. ամենայն
 ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և
 ոչինչ որ ինչ եղև. և Բանն մարմին եղև
 և բնակեաց ի մեզ »: ՅԱստուծոյ՝ Աս-
 տուած Բանն, և ի Հաւրէ միածին՝ Որդին.
 մի յեութենէ, ընդ՝ Հաւր որ էրն յեռ-
 թեան՝, յառաջ քան զյաւիտեանս Բանն
 ի Հաւրէ ծնեալ. նախ քան զամենայն
 յաւիտեանս անճառ: Նոյն ինքն յետ ժա-
 մանակի՝ ծնեալ ի գտերէ մարդոյ ի
 Մարիամայ կուէ, կամաւ հաւր՝ մար-
 ֆնացեալ, և զգեցեալ ի նմանէ մարմին և
 եղեալ որպէս՝ մարդ. ոչ որոշեալ յաս-
 տուածութենէ, այլ կաց ֆնաց որպէս էրն՝,

զի զաշխարհս կեցուցէ: Եւ նա ինքն է
 Քրիստոս Որդին Աստուծոյ, միածին ի
 Հաւրէ և միածին ի Մարիամայ՝, խոս-
 տովանիմք զինքն ճշմարիտ Աստուած և
 մարդ ճշմարիտ. իշխանութեամբ միաւո-
 բեալ. ճանաչեմք զնոյն պատկեր անիզելի
 և առանց որոշման և անյաղթելի. մար-
 մին զգեցեալ զհոգեւորականն, հոգի բա-
 նաւոր և իմացուն՝¹⁰. ըստ ամենայնի եղեալ
 ըստ մերում նմանութեան չարչարելի բաց
 ի մեղաց: Նա ինքն է յերկրէ՝ երկնա-
 ւոր, յառաջ քան զժամանակս անեղակա՝,
 սկզբնաւորեալ և անսկիզբն, անժամանակ
 և յետ ժամանակաց՝¹¹. շինուած և առանց
 շինութեան՝¹². չարչարելի և առանց չար-
 չարանաց. Աստուած և մարդ. միաւորու-
 թեամբ կատարեալ, և ի մինն երկուցս և
 յերկուցսն մի՝¹⁴, Եւ մի պատկեր Սուրբ
 Հոգւոյ՝¹⁵, մի՝¹⁶ զաւրութիւն և մի թագա-
 ւորութիւն երից. պատկերաց և մի էռ-
 թեանց՝¹⁷, Այսպէս փառաւորեմք զսուրբ
 զԵրրորդութիւնն իմաստութիւնն՝¹⁸. վասն
 որոյ Հայր կարդայր յերկնից. « Դա՛ն է որ-

1. Ուղղելի. « անսուտ են վխարութիւնք նոցա »:

2. Անորոշ է իմաստը. ուղղելի է ըստ յունի. « զի
 զոր հրամայեցան նոցա՝ Հոգին Սուրբ ի ձեռն նոցա
 խոսեցան »:

3. Ուղղելի. « աստուածաբանելով յասեփարանսն »:

4. Անորոշ ու խառնակ է. յունի է՛րեւ. « Եմութիւն
 τῶ Πατρὶ, ὁ ὢν ἄκ τοῦ ὄντος ». որ է. « մի էութիւն
 (Համագոյակից) ընդ Հոր, էն՝ յէջն (որ էն՝ յոր էջն) »:

5. Այս է. « Ի վերջին ժամանակս, ի վաճառ
 աւարցս ». յունի է՛րեւ. « ἐπ' ἐσχάτων »:

6. Հոս մեծապէս սխալուած է թարգմանիչը. մինչ Ս.
 Հայրը կ'ուզէ բռնի, « Քրիստոս մարմնացաւ անշար
 (ἀνευ πατρὸς) ի Մարիամայ կուէ ». ինքը կը թարգ-
 մանէ՝ Քրիստոս մարմնացաւ ի կուէն Մարիամայ՝ կա-
 մաւ (երկնաւոր) Հոր:

7. Թարգմատը է հոս « որպէս » ը, չի կայ բնագրին
 մէջ:

8. Խառնակ թարգմանութիւն. ուղղելի ըստ յունի.
 « եղեալ մարդ՝ որ ինչ չէրն, Թաւով Աստուած՝ որ ինչ
 էրն »:

9. Յունի. « Ի մօրէ »:

10. Միաւ և խառնակ թարգմանութիւն, « իշխանու-
 թեամբ միաւորեալ » բառերն սկսեալ. ուղղելի է ըստ
 յունի. « Խոստովանեմ զինքն Աստուած կատարեալ և
 մարդ կատարեալ, յերկուս բնութիւնս՝ ըստ ենթակայու-
 թեան կամ անձնաւորութեան միացեալ » (καθ' ὑπόστασιν

ἡτοι πρόσωπον ἡνωμέναις) ծանոցեալ, անբաժանելի,
 անջոթ և անփոփոխելի, մարմին զգեցալ՝ հոգեւորեալ
 բանաւոր և ժամաւոր Հոգւով (σάρκα ἐνωσάμενον τῇ
 ἐμφυχομένῃ ψυχῇ λογικῇ τε καὶ νοερῇ) »:

11. Ուղղելի ըստ յունի. « Նա ինքն է երկրաւոր և
 երկնաւոր, ժամանակակա (πρόσκαιρος) և մշտնջենաւոր »:

12. Ուղղելի ըստ յունի. « և ընդ ժամանակաւ »:
 « ὑπὸ χρόνον »:

13. Նիւթական թարգմանութիւն և անճշ բացատրու-
 թիւն Քրիստոսի Համբ. « κτιστός καὶ ἀκτιστός »:
 « ստեղծեալ և անստեղծ »:

14. Բնագրին է. « Θεὸς καὶ ἀνθρώπος κατ' ἄμφω
 τέλειος, εἷς ἐν θῷ καὶ ἐν θυσὶν εἷς ». « Աստուած և
 մարդ կատարեալ ըստ երկուցն, մի՝ յերկուս և յեր-
 կուսն՝ մի »:

15. Պաշտաւոր է. ուղղելի է ըստ յունի. « Մի
 անձն Հոր, մի անձն Որդւոյ և մի անձն Հոգւոյն Սըր-
 բոյ »:

16. Կը պակսի հոս. « մի աստուածութիւն », են,

17. Եունի է՛րեւ. « ἐν τρισὶ προσώποις ἡτοι ὁπο-
 στάσεις », որ է « յերեք անձինս կամ անձնաւորու-
 թիւնս (նթեակայութիւնս) »:

18. Միաւ է զբնագրէ զսուրբ Երրորդութիւնն իմա-
 տութիւնն, ուղղելի է ըստ յունի, « զսուրբ Երրոր-
 դութիւնն ի միութեան, և զսուրբ միութեան յԵրրոր-
 դութեան »:

դի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուսարուք ։ Զոսա այսպէս ընկալաւ սուրբ Աստուծոյ կաթողիկէ եկեղեցի. սա ի սուրբ Երրորդութիւնն մկրտի՝ ի կենանն յաւիտեանից ի սմա սրբի՝ հաւասարապատիւ և ի սմա խոստովանի առանց բարժանելոյ և որոշման՝. և սմա երկրպագի՝ առանց

սխալանաց, խոստովանի և փառաւորէ զԵրրորդութիւնն և զմի աստուածութիւնն Հաւար և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն, որում վայելէ փառք՝, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանից. ամէն :

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԼՈՒՍԱԽՈՐԶԷՆ ՅԱՌԱՋ

(Շարունակութիւն, տես Բազմավեպ 1926, էջ 289)

Ծ. Հագիւ է դարու վերջերը կամ Ըին, յունահայ հակառակամարտութեան այդ շնորհալոյն շրջանին, ուր Հայք պէտք կը զգային պատմական կարեւոր կոռուանեալ, վեր կ'ենէն ու կը սկսի ընտելանալ Բարթողոմէոսի անունը մեր ազգին, որով կենարիւյ Ղևոնդիոս հայրապետին առ ս. Գրիգոր կեղծ նամակին մէջ՝ Զենորայ ըրվ. — զործ է դարու,՝ զոր Խալաթեանց Ը-թիւն ալ կ'իջեցնէ՝, — կ'ըստի՝ թէ հոռւ ընդդէմացար ի տեղի ընդդէմաց սրբոց առաջելոցն Բարթողոմէոսի և Թաղէոսի՝ ։ Ը դարուն Ստ. Սիւնեցին կը գրէ՝ թէ « ի վերայ մեր եղև հեղուծն արեան առաջելոցն Բարթողոմէոսի և Թաղէոսի » ։ և ապա ուրիշներ կը կրկնեն յաջորդաբար՝¹⁰ Ուրեմն մինչև Ը դարու մօտ լոկ Խորեհայեցոյն ընծայուած վկայութիւնը կար, և ոչ բնաւ Բարթողոմէոսն աւանդութիւն մը, որ նաև այլոց յայտնի պիտի լինէր :

Հայոց պատմաբան անձնական փափաքին արդիւնքը պիտի համարէի անոր յիշատակութիւնը, եթէ չնկատէի՝ թէ Խո-

րենացին, որ Թաղէոսի քարոզութեան աղբիւրները ցոյց տուաւ¹¹, Բարթողոմէոսի համար բնաւ աղբիւր չէ նշանակիր. և իւր տուած տեղեկութիւնն ալ այնքան ժամանակ աննշմարելի կը լիայ ազգէն : Այս պարագայը զիս կը ստիպեն խորհելու՝ թէ Խորենացւոյն խօսքն իսկ յետաժուտ լինելու է. և զուցէ այս պատճառաւ ալ չոր և առանց հանգամանաց է Մաքսիմ, ինչպէս սովորաբար կը պատահի միջարկութեանց. և առաքելոյն անունն ևս զրուեր է Բարթողոմէոս կամ Բարթողոմէոս¹² միջնադարեան ձեռով, զոր պիտի տեսնենք հետագայ վկայութեանց մէջ, մինչ հնագոյնն էր Բարթողոմէոս՝ ըստ յոյն բնագրին, ինչպէս կը գրեն Աւետարանը և վերոյիշեալ մատենագիրք՝ Եւսեբիոս, Եփրեմ, և մինչև անգամ ղեռ Ստ. Սիւնեցին :

Ծ. Թէ ինչ պատճառաւ Հայք զԲարթողոմէոս իրենց քարոզիչ ըրին, հետաքրքրական ու հայկական հոգեբանութեան ճշգրիտ մեկնութիւնն է բացատրութիւնը

1. Ուղղելի. « մկրտէ » :
2. Ուղղելի. « զսա սրբաբանէ » :
3. Ուղղելի ըստ յունի. « և զսա խոստովանի անբաժանելի և անմեկնելի » :
4. Ուղղելի. « երկրպագէ » :
5. Յաւելի. « զսուրբիւն, մեծութիւն » :

6. Հմմտ. Վաթրեան, Ս. Պարգմ. 76, մ. 2, — 7. Զենոր Գլափ. Վիւննա, 1893, էջ 1 և 2. — 8. Զենոր, 10. — 9. Գր. Թորոց, 823, — 10. Անդ' 302 և 3, — 11. Աստ' 226. — 12. Վերջինը ըստ 1909թ. ապ. Տփղիսու :